

անտուռաց և աղբերաց յաւերժհարսանց, ծածկեալ աստուածոց հետ կենակցելէն :

Այս ըսածներուս մէջ երևակայութիւն չկայ, այն ծանօթութիւնքն որ մեզի հասած են, զանոնք օգտութեամբ 'ի կիր կ'առնում. բայց լուսարանելով ինչպէս որ լաւագոյն կերպով պատշաճ կը գատիմ: Վիրգիլիոսի ներքին յատկութեանց վրայ խօսելով խաբուելու վտանգի մէջ ինկնալն դժուար է :

Ինչ որ արդ ըսի թէ Վիրգիլիոս աւթիղածութեան ձրիք զարդարուած էր, անդէպ պիտի չըլլայ կարգել 'ի հակառակէն ինչ որ ոմանք կը պատմեն Վիրգիլիոսի ունայնասիրութեան նկատմամբ. « Գովելի եղաւ իր ընդհանուր իրենաց մէջ, կ'ըսէ Սերվիոս. միայն ծածուկ պակսութիւն մ'ունէր և տկարութիւն մը, որ չէր կրնար թոյլ յօժարութեանցն դէմ դնել »: Այս բանս նոյն իսկ միայն իր երգերէն կարելի է հետեցնել:

տեցնել, իրաւ համարելով հանդերձ Վիրգիլեայ վրայ կասկած տուող պատմութիւնքն զորնախնի կենսագիրք կամ գրադէտք մեզի հասուցած են, և որ իր բարուց նկատմամբ հետաքրքրական են, կը նշմարին դարձեալ 'ի նոսա ինչ ինչ որ կը համապատասխանէ այն գաղափարին զոր ունինք Վիրգիլիոսի վրայ, և որ կ'որոշէ զինքն յայսմ իր Ուրտոիոս բարեկամէն, և է չափաւորութիւն մը մինչև վառվառն ըղձից մէջ: Ժանրաբարդութեան կերպարանք մը, և խոհականութիւն և զգոնամտութիւն խանդաղատանաց մէջ:

Արդ այս ժանրաբարդութիւնս, այս ազնուական և գորովայից շրջահայեցութիւնս, այս վեհանձնութիւնս նաև տկարութեանց մէջ Վիրգիլիոսի բուն բնութիւնը կը կազմեն. և զայստիկ պէտք չէ մոռնալ իր վրայ խօսելու ժամանակ:

Կը շարունակուի:

Աշխարհիս երկայնագոյն ստորերկրեայ ձաւքան. — Սընի լեռան ստորերկրեայ ճամբան ունի 12,233 մէդր երկայնութիւն. քանի մը տարիէն պիտի լըննայ քան զայն երկայն ստորերկրեայ ճամբան Էդոգարտ լեռան՝ 14,920 մէդր երկայն: Բայց մինչդեռ այս վերջինս դեռ փորուելու վրայ է, անցեալ տարի սեպտեմբերի 5ին բացուեցաւ ալ աւելի երկայն ստորերկրեայ ճամբան Յովսէփ Բ. ըսուած, Շէմիից քաղաքին մօտ, որ շատ նշանաւոր է հանրացն համար՝ Հունգարիոյ մէջ, և այս ստորերկրեայ ճամբան ունի 16,538 մէդր երկայնութիւն:

Բոլոր աշխարհիս մէջ քան զամենն երկայն այս ստորերկրեայ ճամբան է, զոր սկսեւ էին փորել յամին 1782, երբ իժթագաւորէր կայսրն Յովսէփ Բ. ուրուն անուամբը կը կոչուի. աշխատութիւնքն ինչուան մեր օրերը շարունակուեցան, բայց աւելի կ'ամնուալ փու-

թաջանութեամբ: Վերջի 5 տարինն ըլլան մէջ աւելի եռանդով յառաջ մղուեցան աշխատութիւնները, այնպէս որ անոր լրումը զարմանք բերաւ. և փառաւոր հանդէսներով կատարեցին անոր բացումը, վասն զի շատ օգտակար գործ մ'էր Հունգարիոյ այն մետաղաբեր դաւառին համար: Յաջողութեան պատիւը կը տրուի իտալական մեքենայից, որոնք նախ բացին Սընի լեռան ստորերկրեայ ճամբան, ետքն Ամերիկոյ մէջ 'ի Նէվադա ուրիշ ստորերկրեայ ճամբայ մը՝ 6147 մէդր երկայն. հիմայ ալ կը գործեն 'ի Կոդգարտ: Հաջիւ կ'ընեն որ եթէ այն մեքենաներն 'ի սկզբան գործածուած ըլլային, Շէմիիցի ստորերկրեայ ճամբան կը բացուէր 27 տարուան մէջ, մինչդեռ գրեթէ դար մը տևեր է: Իսկ բոլորական ծախքն եղեր է 4,599,000 ֆիորին, որ է ըսել 11 1/2 միլիոն ֆլանք: